

ՄԻՇԵԼ ՎԱՆ ԷՍԹՐՈՒ

ԲԵԼՂԻԱ

ԼԵՆԻՆԳՐԱԴԻ Մ. Ե. ՍԱԼՏԻԿՈՎ-ՇՉԵՂԻՐԻՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ  
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՅԵՐԵՆ ԿՐԿՆԱԳԻՐԸ (ՆՈՐ ՇԱՐ. Բ, № 14)

Դարասկզբին, Հանրային գրադարանի խնդրանքով, Ն. Մառը հրապարակեց 1897 թ. գնված մի ձեռագրի համառոտ նկարագրությունը<sup>1</sup>: Ձեռագիրը պարունակում է բազմապատկման աղյուսակ, սաղմոս, աղոթքներ, տուժար, պատարագամատուց և այլն, ընդօրինակվել է 1554 թ. Մարասի վանքում «ի յերկիրն Քոչիզու, ի գեաւղաքաղաքս էրեր», Ստեփաննոս եպիսկոպոսի կողմից<sup>2</sup>: Բուն ձեռագիրը կազմող մագաղաթյա 244 թերթերը, ինչպես նաև մագաղաթյա պահպանակը՝ կրկնագիր են. թերթերի մեծությունը 20,7×16 սմ: Ն. Մառի կարծիքով հին գրությունը Ժ/ԺԱ. դարի է, մեզ թվում է, սակայն, որ ավելի շուտ Թ/Ժ դարի է: Եվ իրոք, հապավումները սակավաթիվ են, ամենայն բառը երբեք չի հապավվում: Ինչպես գիտել էր Ն. Մառը, ամենուրեք հանդիպում են ընթեռնելի բառեր: Ձեռագիրը բովանդակելիս է եղել նոր կտակարան և ներկայիս վիճակում կազմված է երկու տարբեր գրչագիր մատյանից:

Գրչագրի մանրազնին ուսումնասիրությունը հնարավորություն տվեց վերականգնել երկու ամբողջական թերթ: Ժամանակին այդ թերթերը պատկանելիս են եղել այն երկու գրչագիր մատյաններին, որոնք գրանցութ են Հայթայթել 1554 թ. ընդօրինակված ձեռագրի համար: Առաջին հատվածի (Սնունդը) գիրը հատուկ է թերթերի մեծամասնությանը, երկրորդ հատվածինը (Թուղթը առաքելոց) հանդիպում է միայն 293—294, 297—298, 299—302, 307—310, 311—312 և 315—316 էջերի վրա: Այդ էջերը համապատասխանում են օգտագործված մատյանի միայն 2 թերթին: Պահպանակի վրա նույն գրությամբ մնացել է ևս մի հատված, թերթիկի մի զգալի մասը կտրված է, պահպանվել է ընդամենը 25 տառանիշ (9 տող), սակայն զիրը չնշված չէ և հնարավորություն է տալիս հստակ պատկերացում կազմել երկրորդ կրկնագրի հոյակապ ոճի մասին:

Վերականգնված առաջին թերթի վերին մասը ոյժմ կազմում է ձեռագրի 125 և 136 էջերը, իսկ ստորին մասը՝ 334 և 323 էջերը. բովանդակում է Ծնն. Ե, 20—31: Գրությունը երկսյուն է, սյունակների միջև եղած տարածությունը՝ 2 սմ, յուրաքանչյուրն ունի 20 տող, մեկ տողում միջին հաշվով՝ 22 տառանիշ:

<sup>1</sup> Отчет Императорской Публичной Библиотеки за 1897 год, СПб. 1900, стр. 161—162.

<sup>2</sup> Ամբողջական նկարագրությունը տե՛ս Կ. Ի. Յօզբային, Արմանական բառությունները և այլ աշխատանքները, 1930 թ. Երևան: Այժմ խորին շնորհակալությունուն եմ հայտնում Կ. Յուզբայյանին այն օգնության համար, որ նա ցուցաբերեց հոդվածուն ձևավորելիս:

Գրված է ընտիր, գեղեցիկ երկաթագրով, ոչ ուշ, քան Ժ դարս: Սյունակի լայնությունը մոտավորապես 10 սմ է, բարձրությունը՝ 25,5 սմ: Լուսանցքները եղել են շափականց լայն: Վերին մասում, որը հավանաբար կտրված է, պահպանվել է միայն 4 սմ (էջեր 125 և 136), մինչդեռ ձախ լուսանցքը ունեցել է 7,5 սմ լայնություն (էջեր 125 և 334), իսկ ներքեմնը՝ 9,8 սմ (էջեր 136 և 323): Աջ լուսանցքից մնացել է միայն 2 սմ (էջեր 136 և 323), սակայն 47 էջում պահպանվել է 8,3 սմ. Հավանաբար, դա թերթի շիտակ կողմն է: Աղատ մնացած տարածությունը սկզբնապես ունեցել է գրեթե նույն շափերը, ինչ և գրադաշտը:

Երկրորդ ձեռագրում, որը նյութ է հայթայթել 1554 թ. մատյանին, մասսաթիր օգտագործվել է տուավել շոայլությամբ: Թերթի վերին մասը այժմ կազմում է 293 և 316 էջերը, իսկ ստորինը՝ 308 և 301 էջերը, բովանդակում է Ա. Տիմ. Դ, 1—4: Երկու սյունակները 9,5 սմ լայնությամբ գտնվում են մեկը մյուսից 4 սմ հեռավորության վրա: Եվ առաջ, վերին լուսանցքն ունի 5,2 սմ լայնություն, իսկ ստորինը՝ 11 սմ: Սկզբնապես լուսանցքները համաչափ են եղել, անտարակույս, այն զգալի տարածությանը, որն աղատ է մնացել 308 և 301 էջերի ստորին մասում: Գրությունը շատ խիտ է, տառանշանները ունեն 0,8 սմ բարձրություն, տողերի միջև եղած տարածությունը հավասար է 1 սմ: Յուրաքանչյուր սյունակն ունի ընդամենը 15 տող: Տառանիշերի բանակությունը տողում 12-ից երբեք շի անցնում և իջնում է անգամ մինչև 9: Գրիշը ձգում է գրությունը դեպի աջ, ընդ որում սյունակի աջ սահմանը կազմված է վերշին բառերի ոչ միայն վերջին, այլ երբեմն միջին տառերից:

299-րդ էջը բովանդակում է Ա. Տիմ. Ա, 18—19: Այսպիսով, խնդրո առարկա ձեռագիրը պարունակել է Առաքելոց թղթերը: Նշենք, որ գրանյութի օգտագործման նման պայմաններում միայն Առաքելոց թղթերի համար հարկավոր է 351 թերթ: Իսկ եթե դրանց կցվեն նաև Գործը առաքելոցը, ինչպես դա, հավանաբար, տեղի է ունեցել տվյալ դեպքում, ապա ձեռագիր մատյանը պիտի ունեցած լիներ մոտ 490 թերթ:

1554 թ. օգտագործված երկու ձեռագրերը վկայում են Ժ դարում տիրող բարդավաճման մասին, որը և հնարավոր էր դարձնում գրանյութի օգտագործման այգալիսի շոայլություն:

Ստորև տալիս ենք խնդրո առարկա թերթերի բնագիրը. ըստ որում Ա. բնագիրը համապատասխանում է 125, 136, 334 և 323 էջերին, իսկ Բ-ն՝ 293, 316, 308, 301 էջերին: Անընթեռնելի տառանիշերը, մասնավորապես նրանք, որոնք ծածկված են կազմով, շարված են փոքրատառ:

Բնագրային առումով, այստեղ գտնվում են մի քանի տարբնթերցումներ. որոնք արգեն նշված են եղել Զոհրապյանի կողմից: Ծնն. Ե, 22՝ ավելացվում է եւ եկեաց ենովք: Նկատելի են մի շարք ազավաղումներ կամ դրության ձևերի պարզեցում. Ծնն. Ե, 23 Երկարից. Ե, 26՝ ուր փոխանակ երեն, իսկ եւ Երկու՝ բացակայում է. Տիմ. Դ, 4 գորեամբ փոխանակ գոհութեամբ, արգելուց ընթերցումը (Դ, 2) նոր է: Համբերատար և երկարատես աշխատանքի ընթացքում հնարավոր կլինի թերեւ ընթերցել բազմաթիվ այլ թերթեր: Մենք բավարպում ենք նրանով, որ ցույց ենք տալիս այստեղ մի հին ձեռագիր մատյանի հարստությունը. նշենք, որ նման մատյաններ Ժ դարում այնքան էլ բաղմաթիվ չեն եղել:

## Ա. բնագիր

ՀԱՐԻՒՐ ՎԱԹԱՌՆ ԵՒ ԵՐԿՈՒ  
ԵՒ ՄԵՌԱՒ  
ԵՒ ԵԿԵԱՅ ԵՆՈՎՔ ԱՄՍ ՀԱՐԻՒՐ  
ՎԱԹՍՈՒԽ ԵՒ ՀԻՆԳ ԷԼ ԾԲ  
ՆԱԻ ԶՄԱԹՈՒՍԱՂԱՅ ԵՒ  
ՀԱՃՈՅՆ ԵՂԵՒ ԵՆՈՎՔ ԱՅ ԵՒ  
ԵԿԵԱՅ ԵՆՈՎՔ ՅԵՏ ՄՆԱՆԵ  
ԼՈՅ ՆՈՐԱ ԶՄԱԹՈՒՍԱՂԱՅ  
ԱՄՍ ԵՐԿԱՐԻՒՐ ԵՒ ՄՆԱւ ՈՒ  
ՄՏԵՐՍ ԵՒ ԴՍԵՐՍ ԵՒ ԵՂԵՆ  
ԱՄԵՆԱՅՆ ԱԼՈՒՐՔ ԵՆՈՎՔԱՅ  
ԱՄՔ ԵՐԵՔԱՐԻՒՐ ՎԱԹՍՈՒԽ  
ԵՒ ՀԻՆԳ ԵՒ ՀԱՃՈՅՆ ԳԻԱց  
ԵՆՈՎՔ ԱՅ ԵՒ ՈՉ ՈՒՐԵՔ գՏԱ  
ՆԵՐ ԶԻ ՓՈԽԵԱՅ ԶՆԱ. ԱՅ  
ԵՒ ԵԿԵԱՅ ՄԱԹՈՒՍԱՂԱՅ աՄՍ  
ՀԱՐԻՒՐ ՈՒԹՍՈՒԽ ԵՒ ԵՒՐՆ  
ԵՒ ՄՆԱԻ ԶՂԱՄԷՔ  
ԵՒ ԵԿԵԱՅ մաթոՒՍԱՂԱՅ ՅԵՄ  
ՃԱԱՆԵԼՈՅ ՆՈՐԱ զՂԱՄԵՔ

ԱՄՍ ՈՒԹ ՀԱՐԻՒՐ ԵՒ ՈՒԹ  
ԵՒ ՄՆԱԻ ՈՒՍՏԵՐՍ ԵՒ ԴՍԵՐՍ  
ԵՒ ԵՂԵՆ ԱՄԵՆԱՅՆ աՄԵՐՔ  
ՄԱԹՈՒՍԱՂԱՅ ԶՈՐՍ ԵԿԵԱՅ  
ԱՄՔ ԻՆՆ ՀԱՐԻՒՐ ՎԱԹՍՈՒԽ  
ԵՒ ԻՆՆ ԵՒ ՄԵՌԱՒ  
ԵՒ ԵԿԵԱՅ ՂԱՄԵՔ ԱՄՍ ՀԱՐԻՒՐ  
ՈՒԹՍՈՒԽ ԵՒ ութ ԵՒ ԾԲ  
ՆԱԻ ՈՐԴԻ ԵՒ ԱՆՈՒԱՆԵԱՅ ԶԱ.  
ՆՈՒՆ ՆՈՐԱ ՆՈՅ ԱՍԷ ՍԱ. ՀԱՆ  
ԳՈՒՅՅԵ ԶՄԵղ Ի ԳՈՐԾՈՅ  
ՄԵՐՈՅ ԵՒ ՏՐՏՄՈՒԹԵանց  
ԶԵՌԱՅ ՄԵՐՈՅ ԵՒ ԵՐԿՐԷ  
ԶՈՐ ԱՆԵՇ ՏՐ ԱՅ ԵՒ ԵԿԵԱՅ  
ՂԱՄԵՔ ՅԵՏ ՄՆԱՆԵԼՈՅ ՆՈ  
ՐԱ ԶՆՈՅ ԱՄՍ ՀԻՆԳ ՀԱՐԻՒՐ  
ՎԱԹՍՈՒԽ ԵՒ ՀԻՆԳ ԵՒ ԾԲ  
ՆԱԻ ուստերս ԵՒ ԴՍԵՐՍ  
ԵՒ ԵՂԵՆ ԱՄԵՆԱՅՆ ԱԼՈՒՐՔ ՂԱ.  
ՄԵՔԱՅ ԱՄՔ ԵՒՐՆ ՀԱՐԻՒՐ

## Բ. բնագիր

ՅԻՆ ՈՄԱՆՔ Ի  
ՀԱԻԱՏՈՅՆ ԵՒ  
ՀԱՅԵՍՅԻՆ ՅՈՅ  
Ո ՄՈԼՈՐՈՒԹԵԱ  
Ն ԵՒ Ի ՎԱՐԴԱ  
ՊԵՏՈՒԹԻՒՆ  
ԴԻՒԱՅ ԿԵՂՈԱԽՈ  
ՐՈՒԹԵԱՄԲ Ո  
ՏԱԲԱՆՔ ԽՈ.  
ՐԵԱԼՔ ԻՒՐԵԱՆՅ  
ԽՂՃԻՒՆ ՄՏԱՅ  
ՈՐ ԱՐԳԵԼՈՅՅ  
ՅԱՄՈՒՍՆԱՆԱ  
ԼՈՅ ԵՒ ՄԵԿՆԻ  
ՅԵՆ Ի ԿԵՐԱԿՐՈՅ

ԶՈՐ ԱՅ ՀԱԱՏԱ  
ՏԵԱՅ Ի ՎԱՅԵԼԵԼ  
ՀԱԻԱՏԱՅԵԼՈՅ  
ԵՒ ՈՅՔ ՀԱԱՆԱԼ Ի  
ՅԵՆ Ի ՃԵՄԱՐ  
ՏՈՒԹԵԱՆՆ ՎԵ  
ՐԱՅ ԶԻ ԱՄԵ  
ՆԱՅՆ ԱՐԱՐԱՄՔ  
ԱՅ ԲԱՐԻ ԵՆ ԵՐ  
ԶԻՔ ԻՆՉ ԽՈՏԱՆ  
ՄԱՆԱԻԱՆԴ ՈՐ  
ԳՈՒԹԵԱՄԲ ԸՆ  
ԴՈՒՆԵՑԻՆ ԶԻ  
ՍՐՅԻ ԲԱՆԻԻ ԱՅ  
ԵՒ ԱՂԱԽԹԻՔ

МИШЕЛЬ ВАН ЭСБРОК

Брюссель, Белгия

**АРМЯНСКИЙ ПАЛИМПСЕСТ ИЗ СОБРАНИЯ ЛЕНИНГРАДСКОЙ  
ПУБЛИЧНОЙ БИБЛИОТЕКИ им. М. Е. САЛТЫКОВА-ЩЕДРИНА  
(новая серия № 14)**

**(Резюме)**

Рукопись переписана в 1554 г. в Маасском монастыре епископом Стефаном. 244 пергаменных листа, а также пергаменные защитные листы этой рукописи являются палимпсестом. Старое письмо Н. Марр датирует X/XI в., однако по-видимому оно относится к IX/X в. Детальное изучение этого памятника показывает, что в нем в качестве писчего материала использованы листы двух рукописей, одна из которых содержала Ветхий Завет, другая Послания апостолов. В статье дана реконструкция двух страниц из этих рукописей (Бытие 5, 20—31 и Тимофея 4, 1—4).

MICHEL VAN ESBROECK

Bruxelles-Belgique

**LE PALIMPSESTE ARMÉNIEN DE LA COLLECTION DE LA  
BIBLIOTHÈQUE PUBLIQUE SALTYKOV-CHÉDRINE DE  
LÉNINGRAD (NOUVELLE SÉRIE № 14)**

**(Résumé)**

Le manuscrit a été copié en 1554 au monastère Maras par l'évêque Stéphan. Les 244 pages en parchemin de ce manuscrit, de même que les feuilles de garde en parchemin, sont palimpsestes. L'écriture ancienne est datée par N. Marr des X<sup>e</sup>—XI<sup>e</sup> siècles, cependant elle remonte probablement au IX<sup>e</sup>—X<sup>e</sup> siècles. L'étude détaillée de ce monument montre qu'on y a utilisé comme matériau les feuillets de deux manuscrits, dont l'un contenait l'Ancien Testament et l'autre les Epîtres des apôtres. Dans l'article l'auteur donne la reconstitution de deux pages de ces manuscrits (Genèse, 5, 20—31 et Timothée, 4, 1—4).